

11951

338.4

W-70

1934

210

290

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԿԻՎԻ ՄԵԹՈԴԻՅՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱՆԻՍՏՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՄԻՏԵ

329.150/48.32/8

# ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 7

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՁ ՑԱՆՑԻ ՀԱՄԱՐ

Թ Ե Մ ա. — ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԳՐՈՒՄԸ ՅԵՐԿՐՈՐԻ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ

## I. ԼԵՆԻՆԻ ՈՒ ՍՏԱԼԻՆԻ ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԳՐՄԱՆ ՍԱՍԻՆ\*)

1. Արգյունաբերության տեղադրումը ցարահան Ռուսաստանում:
2. ԽՍՀՄ-ում արգյունաբերության տեղադրման սոցիալիստական սկզբունքը:
3. Արգյունաբերության ճիշտ տեղադրման կարևորությունը և ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացման և սոցիալիզմի կառուցման համար:
4. Լենինյան աղգային քաղաքականությունը և արգյունաբերության տեղադրումը:
5. Արգյունաբերության տեղադրումն առաջին հնդամայակում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի նյութ —

12001

№ 1. — ՍՏԱԼԻՆ — Ձեկուցում 16-րդ համագումարում (ՀԼԲԿ-ի խնդիրները, կետ 1.):

№ 2. — Պետպլան: Առաջին հնդամայակի հանրագումարը, էջ՝ 253 - 256, 266 - 268:

\*) Այս բաժինը մշակվում է միայն այն խմբակներում, փորտեղ ունենցիրները բաժանաչափ պատրաստված են, այն խումբակներում, փորտեղ ունենցիրների պատրաստականությունը թույլ է, խմբակավարը պարապմունքն սկսվում է առաջադրության յերկրորդ բաժնից:

2010

### II. ՆՈՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՇԻՋԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ

1. Կապիտալ ներդրումների բաշխման հիմնական սկզբունքները յերկրորդ հնգամյակում ըստ ԽՍՀՄ-ի շրջանների:
  - ա) Արդյունաբերության հավասարաչափ տեղադրումն ԽՍՀՄ-ի տեւիտորիայում:
  - բ) Արդյունաբերության մոտենալը հումքի և էներգիայի աղբյուրներին:
  - գ) Հետամնաց ազգային հանրապետությունների և մարզերի արագացրած տնտեսական և կուլտուրական մերելքը:
  - դ) «Առաջխաղացումը դեպի առաջ՝ քաղաքի և գյուղի միջև յեղած հակադրությունն փոչնչացրածն ուղղելով»:
2. Կապիտալ շինարարություն յթալը յերկրորդ հնգամյակում:
3. Կապիտալ շինարարությունը թեթեւ և ծանր արդյունաբերության մեջ:
4. Նոր շինարարությունն ըստ արդյունաբերության ճյուղերի՝ մեքենաշինություն, էլեքտրիֆիկացիա, քարածուխ, ծծմբախին, մետալուրգիա և այլն:
5. Կապիտալ շինարարությունը նավթային արդյունաբերության մեջ:

#### ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐՏԱԴԻՐ.

Աշխատանքի նյութ.

№ 3. — Ստալինի ղեկուցումից Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարում:

№ 4. — Կուլքիշեվի ղեկուցումից Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարում:

Ընդլուծում — ղեկուցում 17-րդ համագումարում, բաժին II. ԼԲԱՅՈՒՑԻԶ.

Կուլքիշեվ. — ղեկուցում 17-րդ համագ. բաժին IV

### III. ԱՍՖԻՅ ՅԵՎ ԱՍԽ ՀԻՆԴԻՍՏՐԱՅՈՒՄԸ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ

1. Նավթային արդյունաբերության, փորպես ԱՍՖԻՅ արդյունաբերության գլխավոր ճյուղի հետագա զարգացումը: Նոր շրջանների յուրացումը:
2. Գունավոր մետաղների հանույթի ընդարձակումը Հաստատանում:

3. Քիմիական ու յեոնահանքային արդյունաբերության աճումն Ազրբեյջանում, Վրաստանում և Հայաստանում:

4. Դաշքյասանի մետալուրգիական կոմբինատի կառուցումը:

5. ԱՍՖԻՅ էլեքտրիֆիկացումը յերկրորդ հնգամյակում:

6. Թեթեւ ու սննդի արդյունաբերությունը:

#### ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՅՈՒԹ —

№ 5. — Կուլքիշեվ — Ձեկուցում 17-րդ համագումարում (ԱՍՖԻՅ-ի մասին):

№ 6. — Բերիայի ղեկուցումից Անդրկովկասի կուսկազմակերպությունների 7-րդ համագումարում:

#### ՀԱՐՅԵՐ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւ ցարիզմի ժամանակ արդյունաբերությունը զարգելե միայն Ռուսաստանի կենտրոնում:

2. Ինչո՞ւ յե առհրաժեշտ արդյունաբերության ճիշտ տեղադրումը՝ ազգային հարցի յենինյան-ստալինյան յուժման համար:

3. Ինչո՞ւ ԽՍՀՄ-ում արդյունաբերության տեղափոխում է կատարվում դեպի Արևելք:

4. Թվեցեք յերկրորդ հնգամյակի կարևորագույն կառուցումները և ցույց տվեք այդ կառուցումների նշանակությունը:

5. Ինչպե՞ս են զարգանալու շրջանները, յերկրորդ հնգամյակում: Պատեցեք կարևորագույն շրջանների մասին՝ Ուրալ, Կազանի հանրապետություն, Ուկրաինա և այլն:

6. ԱՍՖԻՅ-ում և Ազրբեյջանում յերկրորդ հնգամյակում յնչպիսի նոր ձեռնարկություններ են կառուցվում և փո՞ր շրջաններում:

7. Ի՞նչ նոր շրջաններ պետք է յուրացվեն Այնեկթի կողմից:

Կազմեց՝ Ն. ՄԵՐԿԵԼ  
Խմբագրեց՝ Ի. ՍՍՖՐԱՆՈՎԻԶ

#### ԱՂԽՑՈՆՔԻ ՆՅՈՒԹ № 1

### 9. ՀԵՐԹԱՎԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ա) ԸՆԴՀԱՆՈՒՐ

1. Ամենից առաջ ԽՍՀՄ-ում արդյունաբերությանն ճիշտ տեղադրման պրոբլեմը: Ինչ կերպ էլ փոր զարգացնենք ժողովրդահան տնտեսությունը, չի կարելի կառավարվել առանց այն հար

ցի, թե ինչպես ճիշտ տեղադրել արդյունաբերությունը, փոր-  
 պես ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղ: Այժմ գոր-  
 ծըն այնպես է, փոր մեր արդյունաբերությունը ինչպես և մեր  
 ժողովրդական տնտեսությունը հենվում է հիմնական ած-  
 խա - մետալուրգիական բազայի վրա Ուկրաինայում: Հաս-  
 կանալի յե, փոր առանց ալյուրի բազայի անհնարին է յերկ-  
 բի ինդուստրացումը: Յե՛սի ահա ալյուրի բազա յե հանդիսա-  
 նում թե՛զ մոտ ուկրաինական մառերանյութային - մետալուր-  
 գիական բազան: Բայց կարո՞ղ է արդյոք հետագայում այդ բա-  
 զան բավարարել և՛ հարավը, և՛ ԽՍՀՄ-ի կենտրոնական մասը,  
 և՛ հյուսիսը, և՛ հյուսիս - արևելքը, և՛ Հեռավոր Արևելքը, և՛  
 թուրքեստանը: Բոլոր սովյալներն ասում են մեզ այն, փոր չե  
 կարող: Նորը մեր ժողովրդական տնտեսության մեջ կայանում է,  
 իմիջի ալյոց, նրանում, փոր այդ բազան մեզ համար արդեն ան  
 բավարար է դարձել: Նորը կայանում է նրանում, փորպեսզի,  
 ամեն կերպ զարգացնելով այդ բազան նաև հետագայում, սկսել,  
 դրա հետ միասին, անհապաղ ստեղծել յերկրորդ ածխա - մետա-  
 յուրգիական բազա: Այդ բազան պետք է լինի Ուրալ - Կուրնեց  
 կի կոմբինատը, Կուրնեցկի կոքսացող ածուխի միացումը Ուրա-  
 յի հանքի հետ: (Մախաարուքյուններ): Ավտոգործարանի կա-  
 սուցումը Նիժնում, սրահտորի գործարանինը՝ Չելյաբինսկում,  
 մեքենաշինական գործարանինը՝ Սվերդլովսկում, կոմբայնի գոր-  
 ծարանինը՝ Սարատովում և Նովոսիբիրսկում, աճող գունավոր  
 մետալուրգիայի առկայությունը Սիբիրում և Կապաստանում,  
 փոր պահանջում է ստեղծել նորագույն արհեստանոցների ցանց  
 և մի շարք հիմնական մետալուրգիական գործարաններ արևել  
 քում. վերջապես, Նովոսիբիրսկում և թուրքեստանում տեքս-  
 աիլ ֆաբրիկաների կառուցման մասին հանված փորշումը, —  
 այս բոլորը հրամայողականորեն պահանջում են անհապաղ սկսել  
 Ուրալում յերկրորդ ածխամետալուրգիական բազա ստեղծելու  
 դրքը:

Դուք գիտեք, փոր մեր կուսակցության Կենտկոմը այս փո-  
 դով էլ հենց արտահայտվել է Ուրալմետի մասին իր բանաձե-  
 վում:

(ՄՍԱԼԻՆ. — Համկոմկուռի (բ) 16-րդ համագումարին տը-  
 ված բաղնաշվետվությունից):

## ՏԵՂԱԳՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒ- ԹՅԱՆ ՋՅՈՒՂԵՄԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՍԵՋ

Յերկրի սոցիալիստական ինդուստրացումը, բնական հարս-  
 տությունները բաղձակողմանի կերպով ոգտագործելու և արդ-  
 յունաբերությունը հումուլյի աղբյուրներին մատեցնելու, քա-  
 զաքի ու գյուղի միջև յեղած հակադրության հաղթահարման և  
 աղբային շրջանների տնտեսական հետամնացության յիկվիբացիա  
 յի ինդիլը պայմանավորել են արտագրողական ուժերի մինչհե-  
 ղախիտական Ռուսաստանում ստեղծված տեղադրումն արմատա-  
 պես փոփոխելու անհրաժեշտությունը:

Կապիտալիստական Ռուսաստանում արտագրողական ուժերի  
 տեռիտորյալ տեղադրման կապիտալիզմին հատուկ անհավասարա  
 չափությունն արտահայտվել է նրանում, փոր արդյունաբերու-  
 թյան յերեք թառորդից ալեկին կենտրոնացված է յեղել չորս շքր  
 ջաններում (Մոսկվայի, Իվանովսկի, Նախկին Պետերբուրգի շքր-  
 ջաններում և Ուկրաինայում): Յերկրի արդյունաբերական դար  
 գացման կենտրոնացումը Յեվրոպական Ռուսաստանի մի քանի  
 շքրաններում, ծայրամասերի տնտեսական և կուլտուրական ծայր  
 ստիճանի հետամնացության հետ միասեղ, պարմանապել է այդ  
 ծայրամասերի դադութային դրությամը, փորոնց նկատմամբ կենտ  
 րոնը հանդիսանում է մայր յերկիր: Սիբիրը, Միջին Ասիան,  
 Կովկասը, Անդրկովկասը հումութային կցորդներ էլին դարձել  
 կենտրոնական Ռուսաստանի համար, փորոնք չունեկին կամ հա-  
 մարյա թե չունեկին արդյունաբերական պրոյետարիատ, փորոնք  
 բավականաչափ տեռիտորիայի վրա պահում էին տնտեսության  
 ամենապրիմիտիվ ձեվերը և նահապետական - ֆեոդալական հա-  
 րաբերություններ: Տեղադրումը ծայր ստիճանի անհավասարա  
 չափ բնութք ուներ նաև հեց մայր յերկրի ներսում:

Յերկրի ահագին բնական հարստություններն ուսումնասիր-  
 ված էլին չնչին չափերով: Այդ բղիտում եր մինչհեղափոխական  
 Ռուսաստանի ընդհանուր տնտեսական հետամնացությունից,  
 ուսական և ոտարյերկրյա կապիտալի անցկացրած՝ բնածին հա  
 նածոների հանքավայրերի և այլ բնական աղբյուրների մի փոքր  
 մասի թայանչիական շահագործման քաղաքականությամը՝ միայն  
 ամենաբնակեցված և տրանսպորտի ու այլ պայմանների տեսակե  
 տից մատչելի շքրաններում:

Յարական Ռուսաստանի արտագրողական ուժերի տեղադր-



45898-2

30641-63

ման անհավասարաչափությունը կարելի չէ տեսնել նրա տնտեսութեան բոլոր ճյուղերում :

Սեյ մետալուրգիան համարյա ամբողջութեամբ կենտրոնացված էր Ռուսաստանի հարավում : 1913 թ. Դոնբասի և Մերձդնեպրյան գործարաններն արտադրել են չուգունի 74 տոկոսը, մնացած արտադրութեանը կենտրոնացված էր Ուրալի և կենտրոնի վոչ - մեծ, տեխնիկապես - հետամնաց գործարաններում, վարոնք աշխատում էլին փայտածուխով :

Ել ավելի մեծ կենտրոնացումով է աչքի ընկել Ռուսաստանի քարածուխային արդյունաբերութեանը : Քարածուխի հանույթը գրեթե անմիջապես կենտրոնացված էր Դոնբասում, վորի տեսակարար կշիռը Ռուսաստանի ընդհանուր ածխահանույթում 1913 թ. կազմում էր 87 տոկոս : Հսկայական յերկիրը կախվածութեան մեջ էր մի ածխային շրջանից :

Արդարային Ռուսաստանում բոլորովին թույլ կերպով զարգացած մեքենաչինութեանը հիմնականում կենտրոնացված էր կենտրոնական շրջաններում — ներկայիս Մոսկվայի և Լենինգրադի մարզերի տեխնոտրիայում և Ուկրաինայում : Ռուսաստանի ազգային ծայրամասերում մեքենաչինութեանը բացակայում էր :

Բամբակենու արդյունաբերութեանը նույնպես կենտրոնացված էր ներկայիս Մոսկվայի, Իվանովսկի և Լենինգրադի մարզերի տեխնոտրիայում : Վուչի արդյունաբերութեանն ավելի քան 50 տոկոսով կենտրոնացված էր Իվանովսկի մարզում, թեև յերկարամտը - վուչի հիմնական մասսաներն արտադրվում էլին Արևմտյան մարզում, Բելոռուսիայի և այլ շրջաններում :

Ամբողջ շաքարի արդյունաբերութեանը կենտրոնացված էր Ուկրաինայում և Կենտ. Սեյահողային մարզում :

Ֆարական Ռուսաստանի արտադրողական ուժերի արդյունաբերութեան և գյուղական տնտեսութեան մեջ յեղած տեղադրման համապատասխան էլ զարգացել է յերկաթուղային տրասպորտը : Յերկաթ գծերի հիմնական ցանցը հեռանում էր շտապիդով կենտրոնից և հիմնականում կենտրոնանում էր Ռուսաստանի յեկտրոպական մասում (վորը համեմատաբար յերկաթգծերի զարգացման ցանց ուներ) 1000 քառ. կիլոմետրի վրա 11,3 կիլոմետր Միբիբի (Կազակստանի և մյուս հեռավոր շրջաններում) 0,6 կիլոմետրի դիմաց :

Արդյունաբերական զարգացումից դուրս են մնացել այնպիսի չափազանց հարուստ հումույթի շրջաններ, ինչպիսին է Միջին Ասիան, վորը հանդիսանում է բամբակ մատակարարողը, Անդեր կովկասը վորտեղ թայաչիորեն ոգատագործվել են միայն նալթալին հանքավայրերը՝ կտրված անդրկովկասյան ազգութեանների բոլոր մնացած տնտեսական կյանքից : Սիբիրն իր ածխի, հանքե-

րի և այլնի անսպառ հարստութեաններով, Կազակստանը և մյուս շրջանները :

Արտադրողական ուժերի այդպիսի տեղադրումը կապիտալիստական Ռուսաստանում բլխել է նրանց զարգացման կապիտալիստական ձեւից, համապատասխանել է նրանց մինչհեղափոխական զարգացման մակարդակին և կալվածատերերի ու կապիտալիստների շահերին, վորոնք շահագրգռված են յեղել ծայրամասերի «կիսաօթյակներիութեան և հենց իսկական վայրենիութեան» (Լենին) վիճակում մնալուն մեջ :

Պրոլետարական պետութեանը, վոր իրեն հիմնական ինդեր էր դրել յերկրի սոցիալիստական ինդուստրացումը, չէր կարող հաշտվել ժողովրդական տնտեսութեան արտադրողական ուժերի այդպիսի տեղադրման հետ : Արտադրողական ուժերի սոցիալիստական տեղադրումը հանդիսանում է սոցիալիզմի կառուցման ծրագրի մի մասը : Իր տնտեսութեան վերականգնման շրջանում Սորհրդային Միութեանը, ոգտագործելով հին հիմնական կապիտալը, չի կարողացել էյապես կերպարանափոխել տեղեկված տեղադրումը, և միայն Միութեան ժողովրդական տնտեսութեան յայն վերակառուցման շրջանում, առաջին հնգամյա պլանի հիման վրա հսկայական նոր շինարարութեան շրջանումն էր, վոր իրենց ամբողջ յայնութեամբ կարող էլին ցրվել ՍՍՀՄ-ի արտադրողական ուժերի սոցիալիստական տեղադրման հարցերը :

Առաջին հնգամյակի պլանում իրենց արտահայտութեանն են գտել Մարքսի, Ենգելսի, Լենինի և Ստալինի հիմնական ցուցմունքները՝ սոցիալիստական տնտեսութեան մեջ արտադրողական ուժերի ուղիղ տեղադրման և քաղաքի ու գյուղի հսկայութեան վերացման ասպարիդում : Արդյունաբերութեան ավելի հավասարաչափ բաշխումը, արդյունաբերութեանը դեպի հումույթի աղբյուրները մոտեցնելը, տնտեսական շրջանների մասնաթիւտացումը, ազգային շրջանների տնտեսական և կուլտուրական հետամնացութեան վերացումը, յերկրի պաշտպանունակութեան ուժեղացումը — այդպիսիք են հիմնական մոմենտները, վորոնք իրենց արտահայտութեանն են գտել առաջին հնգամյակի պլանում :

Արտադրողական ուժերի սոցիալիստական տեղադրման հնգամյակի տված հիմնական գծերը յրացվել են կուսակցութեան և կառավարութեան վորոշումներով՝ Արեւիլքում ածխա - մետալուրգիական յերկրորդ բազա տեղեկու մասին, հետագատալուրդացած իտղը բազաքային կենտրոններում, առաջին յում՝ զարգացած իտղը բազաքային կենտրոններում, առաջին հերթին Մոսկվայում և Լենինգրադում նոր արդյունաբերական շինարարութեանը գաղաբեցնելու մասին, և գյուղատնտեսական մարզերի մասնադիտացման մասին :

Համանություն տարւոյ Կենտրոնի 1930 թիւ մայիսի 15-ի փոքրաման Ուրալի վերաբերյալ, 16-րդ համագումարը հաստատում է, փոքր «յերկրի ինդուստրացումը չի կարող հենվել հետագայում միայն մեկ հարապային ածխա - մետալուրգիական բազայի վրա: Յերկրի արագ ինդուստրացման կենսականորեն անհրաժեշտ պայմանն է հանդիսանում Արեւելքում ԽՍՀՄ-ի յերկրորդ հիմնական ածխա - մետալուրգիական կենտրոնի ստեղծումը՝ Ուրալի և Սիբիրի հարստագույն ածխային և հանքային հանքավայրերի ողջագործման միջոցով»\*):

«Իրա հետ միասին համագումարն անհրաժեշտ է համարում արեւելյան շրջաններում (Ուրալ, Սիբիր, Կազակստան, Միջին Ասիա) ուժեղացրած կերպով զարգացնել նաև արդյունաբերութեան այլ ճյուղեր, փորձնք կհենվեն տեղական հումուլթային աղբյուրների վրա (գունավոր մետալուրգիա, տեքստիլ արդյունաբերութեան և այլն): \*\*)

Առաջին հնգամյա պլանի այս հիմնական դրույթները, փորձնք զարգացվել և լրացվել են Համկոմկուսի (ք) 16-րդ համագումարի փորձումներով, նշանակել են արդյունաբերութեան խոշորագույն տեղաշարժը դեպի Արևելք, ինդուստրացման ամենաբարձր տեմպեր և առաջներում հետամուտ շրջանների ընդհանուր տնտեսական աճում:

Իրանով իսկ արդյունաբերական շահագործման մեջ են ներգրավվել յերկրի աճադին տեխնոլոգիայի յանցյալում գրեթե ձեռք չարված, հսկայական հարստութեանները:

(ԽՍՀ Միութեան ժողովրդական տնտեսութեան գարգացման առաջին հնգամյա պլանի կառարման համագումարները):

### ԱՂԻՍՏԱՆՔԻ ՆՅՈՒԹ № 3

## ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՎԵՐԵԼՔԸ ՅԵՎ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Անցնում եմ ԽՍՀՄ ներքին դրութեան հարցին:  
ԽՍՀՄ ներքին դրութեան տեսակետից հաջվետու ժամանակաշրջանը ներկայացնում է ամենի ու ամենի ծավալով վերելքի պատկեր՝ ինչպես ժողովրդական տնտեսութեան բնագալառում, նույնպես և կուրտուրայի բնագալառում:

\* ) Կենտրոնի 1930 թ. մայիսի 15-ի փորձումը:  
\*\* ) Համկոմկուսի (ք) 16-րդ համագումարի փորձումը — «Արդյունաբերութեան հնգամյա պլանի կառարման մասին):

Այդ վերելքն ուժերի հասարակ քանակական կուտակում չի յեղել միայն: Այդ վերելքը նշանակալից է նրանով, փոքր նա րսկրդունքային փոփոխութեաններ և մտցրել ԽՍՀՄ կառուցվածքի մեջ և արմատապես փոխել է յերկրի գեմքը:

ԽՍՀՄ այդ ժամանակաշրջանում վերափոխվել է արմատապես, իրենից դեն շարտելով հետամնացութեան ու միջնադարի տեսքը: Ազգարային յերկրից նա դարձել է ինդուստրիալ յերկիր: Մանր անհատական գյուղատնտեսութեան յերկրից նա դարձել է կոլեկտիվ, խոշոր, մեքենայացրած գյուղական տնտեսութեան յերկիր: Խալար, անդրագետ և անկույտուրական յերկրից նա դարձել է, ամենի ճիշտ՝ դառնում է գրագետ, կուլտուրական, ԽՍՀՄ աղբյուրների և ժողովուրդների յեղունքով գործող բարձրագույն, միջնակարգ և տարրական դպրոցների հսկայական ցանցով պատած յերկիր:

Ստեղծված են արտագրութեան նոր ճյուղեր. ստանկաչինութեան, ամտոմորիի արդյունաբերութեան, արակտորային արդյունաբերութեան, քիմիական արդյունաբերութեան, մոտորաչինութեան, սալառնակաչինութեան, կոմքայնաչինութեան, գորեղ տուրքինների և գեներատորների, փորակային պողպատենների, յերկաթա-ձուլվածքների, սինտետիկ կառուչուլի, բորակածնի, արհեստական թելի արտագրութեան և այլն և այլն (յերկարատև ծախահարութեաններ):

Այդ ժամանակաշրջանում կառուցված և գործարկված են հազարավոր նոր, միանդամայն ժամանակակից արդյունաբերական ձեռնարկներ: Կառուցված են Դնեպրոստորոյի, Մագնիտոստորոյի, Կուզնեկցոստորոյի, Չելյաբինստորոյի, Բորիկի, Ուրալ մաշտորոյի, Կարմաշտորոյի պես հսկաներ: Նոր տեխնիկայի բազայի վրա վերակառուցված են հազարավոր հին ձեռնարկութեաններ: Կառուցված են նոր ձեռնարկութեաններ յեվ ստեղծված են արդյունաբերութեան ոջախներ ԽՍՀ Միութեան աղբային հանրապետութեաններում և ծայրամասերում — Բելոսուսիայում, Ուկրայինայում, Հյուսիսային Կովկասում, Անդրրկովկասում, Միջին Ասիայում, Կազակստանում, Բուրյատ-Մոնղոլիայում, թաթարիայում, Բաշկիրայում, Մուրալում, Արեւմտրայան և Արևելյան Սիբիրում, Հեռավոր Արևելքում և այլն:

Ստեղծված են 200.000-ից ամենի կորտնտեսութեաններ յեվ 5.000-ից ամենի խորհունտեսութեաններ՝ նրանց համար նոր ու յոնական կենտրոններով և արդյունաբերական կետերով:

Համարյա դատարկ տեղերում աճել են նոր, մեծ քաղաքներ, մեծ քանակութեամբ բնակիչներով: Հսկայորեն աճել են հին քաղաքներն ու արդյունաբերական կետերը:

Հիմնադրված է Ուրալ - Կուզնեցկի կոմբինատը — Կուզ-

նեցելի կոթացող ածուխի և Ուրալի յերկաթահանքի միացումը: Այդպիսով կարելի չե համարել, վոր Արևելքում մետաղաձուլական նոր բազան ցնորքից դարձել և իրականութիւն:

Նոր հզոր նախթային բազայի հիմքեր են դրված Ուրալյան լեռնաշղթայի հարավային յանջերում — Ուրալի մարզում, Բաշկիրայում, Կազակստանում:

Արևելք և, վոր ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերում պետութեան հսկայական կապիտալ ներդրումները, վորոնք հաշվետու շրջանում կազմում են ավելի քան 60 միլիարդ ուրբի — իդուր չեն անցել և սկսում են իրենց արդյունքները տալ:

Այս նախաձեռնութեան հետևանքով ԽՍՀՄ ժողովրդական տնտեսութեան յեկամուտը 1929 թվի 29 միլիարդ ուրբուց 1933 թվին հասել և 50 միլիարդ ուրբու, այն ժամանակ, յերբ այդ նույն շրջանում կապիտալիստական բոլոր յերկրներում, առանց բացառութեան, հսկայական չափերով ընկել և ժողովրդական յեկամուտը:

Հասկանալի չե, վոր այս բոլոր հաջողութիւններն ու ամբողջ վերելքը պետք և հասցնելին, և իրոք հասցրել են ԽՍՀՄ-ի ներքին դրութեան ամբապնդմանը:

Ինչպես կարող ելին այդ հսկայական փոփոխութիւնները տեղի ունենալ ինչ վոր 3-4 ատարվա ընթացքում մի խոշոր պետութեան տերիտորիայի վրա, նրա հետամնաց տեխնիկայով, հետամնաց կուլտուրայով: Հրաշք չե՞ արդյոք սա: Գա հրաշք կլիներ, յեթե դարգացումը տեղի ունենար կապիտալիզմի և անհատական մանր տնտեսութիւնների բազայի վրա: Բայց դա հրաշք անվանել չի կարելի, յեթե նկատի ունենանք, վոր մեզ մտ գարգացումը տեղի չե ունեցել սոցիալիստական շինարարութեան ծախարման հիման վրա:

(ՍՍՍՒԽՆ. — Զեկուցում Համկոմկոմի (բ) 17-րդ համագումարում):

## ԱՂԽԱՏՄԱՆ ԲԻ ՆՅՈՒԹ № 4

# ՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՍՅԱԿՈՒՄ

Շինարարութեան ընդարձակ ծրագիրը յերկրորդ հնգամյակում յերկրի արդյունաբերական և գյուղատնտեսական աշխարհագրութեան մեջ յենթադրում և արմատական տեղաշարժեր, վորոնք տեխնիկական վերակառուցման ավարտման պլանի բաղկացուցիչ մասն են հանդիսանում:

Արդյունաբերութեան տեղադրումը՝ արտադրողական ուժերի նոր տեղադրումի ստեղծման մեջ առաջատար ողակ և հանդիսանում:

Ուրալ — Կուզնեցկի կոմբինատի շինարարութեան ավարտման հետ միասին յերկրորդ հնգամյակում ստեղծվում են ծանր և թեթեւ ինդուստրիայի մի շարք նոր կենտրոններ Արևելքում:

Արևելքի շրջանները (Ուրալ, Արևմտյան և Արևելյան Սիբիր, Հեռավոր Արևելյան յերկիր, Բաշկիրայի և Կազակստանի ԱՍԽ հանրապետութիւններ, Միջին — ասիական հանրապետութիւններ) ստանում են ժողովրդական տնտեսութեան մեծ ներդրւոյ վող կապիտալ ներդրումների 37,5 տոկոսը և ծանր արդյունաբերութեան մեջ ներդրւոյ ամբողջ կապիտալ ներդրումներին 37,7 տոկոսը, քարածխային արդյունաբերութեան մեջ ներդրւոյ կապիտալ ներդրումների 49 տոկոսը, սեւ մետաղագործութեան՝ 42,1 տոկոսը, գունաւորի՝ 71,6 տոկոսը, մեքենաշինութեան՝ 28,3 տոկոսը և քիմիայի՝ 31,5 տոկոսը:

Արդյունաբերութիւնն Արևելք փոխադրելու տեղաշարժերը դրա հետ միասին նշանակում են արդյունաբերութիւնը հումքի աղբյուրներին մոտեցնելու յենիւնյան սկզբունքի կենսագործումը: Արդյունաբերական ձեռնարկութիւնների քարտեզն ավելի ու ավելի մոտենում և բնական ռեսուրսների տեղադրման քարտեզի հետ: Ուրալ — Կազակստանի յերկրի շրջանները, վորոնք 1932 թվին կենտրոնացրել ելին ածուխի ամբողջ արդյունաբերական պաշարի 65 տոկոսը, պղնձի՝ 34,2 տոկոսը, — յերկրորդ հնգամյակի ընթացքում, ածուխի ընդհանուր միութեան հանույթում բարձրացնում են իրենց տեսակարար կշիւր 17,5 տոկոսից՝ 27 տոկոսի, պղնձաձուլման մեջ՝ 57,7 տոկոսից՝ 77,0 տոկոսի: Արևելքի և Միջին Ասիայի նախթային ռեսուրսների ուժեղացրած ոգտագործման հիման վրա, նոր նախթային շրջանները նախթա հանման մեջ տեսակարար կշիւր բարձրացնում են 1932 թ. 2,5 տոկոսից՝ 1937 թ. 11,4 տոկոսի: Լճոական տեղաշարժեր են իրագործվում թեթեւ և սննդի արդյունաբերութեան ճյուղերը գի պի հումքի աղբյուրները տեղափոխելու գործում: Միջին Ասիան բամբակենու գործվածքների արտադրութեան մեջ տեսակարար կշիւր բարձրացնում և 1932 թ. 0,5 տոկոսից՝ 1937 թ. 4,6 տոկոսի: Հիմնական կտաւատային շրջանները (Արևմտյան մարզ, Գորկու յերկիրը, ԲՍՍՀ) բարձրացնում են կտաւատային գործվածքների արտադրութեան մեջ տեսակարար կշիւր 1928 թ. 4,3 տոկոսի: Հիմնական կտաւատային շրջանները (Արևմտյան բում կառուցվում են խոշոր, տեխնիկայես կատարելագործված մսի կոմբինատներ՝ Սեմիպալատինսկին՝ 45,8 հազար տոնն,

Որակին՝ 28 հազար տոնն և ուրիշներ, պահածոների, յուղի գործարաններ և սննդի արդյունաբերությունն այլ ձևերով չլուծված:

Արդյունաբերության հետագա շարժումը դեպի Արևելք հույս է կապված, ինչպես արդարացի է նոր հեռավորության բազաների ստեղծումը, նշանակում է դրա հետ միասին նաև արդարյան հանրապետությունների և մարզերի տնտեսական հետամնացությունը վերացնելու անհրաժեշտ նախադրյալների ստեղծում: Արտադրողական ուժերի տեղադրման ամենացայտուն տեղաշարժերը բնորոշվում են ժողովրդական տնտեսության ենթակառուցվածքի հիմնական բաղադրիչ էլեմենտների տեղադրման տեղաշարժերով:

Տեղաշարժեր՝ էլեկտրականների սահմանված հզորությունների տեղադրման մեջ.

Սահմանված հզորությունների տեսակաբար կշիռը տոկոսներով բնօրինակում գումարի նկատմամբ

**ՇՐՋԱՆՆԵՐ**

	1932 թ.	1937 թ.
ԽՍՀՄ	100.00	100.00
Հին արդյունաբերական շրջաններ և ներդրողի, Մոսկովյի, Ռյանովսկի մարզեր, Պոլոտի (Թաթարիա, Միջ. Ասիա, Ստորին Վոլգա և Գորկու յերկիր)	29.51	26.90
Ուկրաինայի ՄՈՂ	10.53	10.16
Ուրալ - Կազ. յերկիր շրջանները (Ուրալ, Բաշկիրիա, Արևմտյան Սիբիր, Կազակստան)	30.26	22.01
Արևելյան Սիբիր և Հեռու Արևելյան յերկիր	12.57	18.10
Անդրկովկաս	0.87	2.36
Միջին Ասիա	4.62	6.11
	0.79	3.37

Արդեն հիմա, ինչպես ճիշտ նշեց ընկ. Ստալինը, մեզ մոտ, չկան յերկրում գուտ ագրարային կամ գուտ ինդուստրիալ շրջաններ: Յերկրորդ հնգամյակում արդյունաբերության զարգացումը հասնում է դարդացման այնպիսի աստիճանի, վոր վերացվում է առանձին շրջանների արդյունաբերության տեխնիկական հետամնացությունը: Շրջանների ինդուստրացման այդ ընդարձակ պրոցեսն ընդհանուր ձևով կարող է պատկերացվել նրանով, վոր յերկրորդ հնգամյակում շրջանների զբերակչոց մասում արդյունաբերության մեջ կատարված կապիտալ ներդրումների տեսակարար կշիռը՝ արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ կատարված կապիտալ ներդրումների գումարում՝ կազմում է 60-70 տոկոսից ավելին, իսկ առաջյա

գյուղատնտեսական այնպիսի շրջաններում, ինչպիսին է Կազակստանը՝ 70 տոկոսը, Արևելյան Սիբիրի յերկրում՝ 79 տոկոսը, Միջին Վոլգյան յերկրում՝ 63 տոկոսը, և այլն:

Արդեն հիմա, ինչպես ճիշտ նշեց ընկ. Ստալինը, մեզ մոտ չկան գուտ այստող շրջաններ յերկրում: Ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման այստում և շրջանների տիպի փոփոխման հետևանքով, յերկրորդ հնգամյակում սպասող շրջաններն առանձնապես արագ տեմպերով վերացնում են յերենց գյուղատնտեսության հետամնացությունը: Այդ ձևը է բերվում այն ուղիով, վոր ընդարձակվում են սպասող շրջանների ցանքային տարածությունները, աճում է բերքատվությունը, աճում է նախկին հետամնաց գյուղատնտեսության ունեցող շրջանների տեխնիկական վերադասարկությունը: Այսպես, կենտրոնական և հյուսիսային մարզերի տրակտորային պարկեր յերկրորդ հնգամյակում կաճի 11 անգամ, այն Ժամանակ, յերբ հարվածային մարզերում նա աճում է 3,3 անգամ:

Յես չեմ կարող ինձ ինդիք դնել առանձին շրջանների դարդացման այսնի մանրամասն բնութագրությունը տայր: Յերկրորդ հնգամյակում այդ պլանով յուժյող խնդիրները չափից ավելի բազմատեսակ են և մեծ, վորպեսզի կարելի յիներ դրանց ընդգրկել զեկուցման շրջանակներում: Այդ մանրամասն նյութը գուր կգտնել Պետայսնի բաժնամ աշխատանքում: Դրա համար էլ յես կահահանափակվեմ առանձին շրջանների կարեոր գույն տնտեսական խնդիրների նշումով, մասնավորապես և հատկապես նրանցից այն խնդիրների, վորոնց յուժումը վերացնում է գոյություն ունեցող նեղ տեղերը, վորոնց հաղթահարման համար պետք է աշխատել առանձին համառությունը:

(Ընկ. ԿՈՒՅՐԻՇԵՎԻ զեկուցումից Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարում).

**ԱՐԽԱՏԱՆՔԻ ՆՅՈՒԹ № 5**

ԱՍՖԻ հանրապետությունը: Անդրկովկասյան արդյունաբերության գլխավոր ճյուղը հանդիսանում է նավթարդյունաբերությունը: Նավթի հանույթը 1932 թ. 12.6 միլիոն տոննից աճում է մինչև 30 միլիոն տոննի 1937 թ.: Այդ ծրագրի կատարումը պահանջում է շահագործման մեջ ներգրավել մի շարք նոր շրջաններ՝ Լոկ - Բատան, Կայա, Սուլու - Թեյլե և այլն, յիովին վարտել նավթահանման արդյունաբերության տեխնիկական վերակառուցումը, նավթաթոր նոր գործարանների վերակառուցումն ու կառուցումը: Յերկրորդ հնգամյակում պետք է զարգանա նաև արդյունաբերության մի շարք այլ ճյուղերի ար



տաղրութիւնը: Ընդարձակվում է դռնավոր մետաղների արտադրութիւնը՝ Չանգեղուցի և Այլահիւրդու կոմբինատների վերակառուցման հաշիւին: Սոչոր մասշտաբներով զարգանում է բիմիական և լեռնահանքային արդյունաբերութիւնը: Սեփական հումքի բազայի վրա կառուցվում են թեթև արդյունաբերութիւն 20 ձեռնարկութիւն և 37 ձեռնարկութիւն սննդի արդյունաբերութիւն: Յերկրորդ հնգամյակում կսկսի Դաշքեսանի մետաղագործական խոշորագույն կոմբինատի կառուցումը, մորըն սկիզբ կդնի Անդրկովկասում մետաղագործութիւն զարգացմանը: Մեքենաչինութիւն արտադրանքն աճում է 3,4 անգամ, բարածուխներ՝ 7 անգամ, նավթներ՝ 2,4 անգամ, բամբակի գործվածքներինը՝ 4,0 անգամ, կոշիկեղենինը՝ 4,4 անգամ, պահածոներինը՝ 3,8 անգամ:

Անդրկովկասի տնտեսութիւն մեջ ահադին դեր է խաղում եներգետիկան՝ Ժողովրդական տնտեսութիւն զարգացման արագ ասեմպերը, տրանսպորտի ելեքտրիֆիկացումը պահանջում են սպիտակ աճուխի ամենահարուստ ռեսուրսների առավելագույն ոգտագործումը: Յերկրորդ հնգամյակում կառուցվում ու ընդարձակվում են տասն ելեքտայաններ, վորոնց մեջ ալնպիսիներ, ինչպիսին է Քանաքեռինը՝ 88 հազար կիլովատ հզորութիւնով, Գյումրիինը՝ 140 հազար կիլովատ, Սրամինը, Թարթատինը և այլն: Երջանային ելեքտրակայանների ելեքտրոններ գիլայի մշակման աճումը 12 անգամով, ապահովում է արդյունաբերութիւն ելեքտրիֆիկացումը, 600 կիլովատը յերկարութիւնով յերկաթուղու բոլոր բեռնափոխադրման յարված տեղամասերի ելեքտրիֆիկացումը և մի շարք այլ խնդիրների յուծումը:

Գյուղատնտեսութիւն կենտրոնական խնդիրն է հանդիսանում ամեն կերպ զարգացնել մերձարևադարձային մշակույթները, բարձրարժեք հատուկ անկումները՝ թեյ, ռամի, և այլն և ցիտրուսայինների մշակույթները՝ կիտրոն, մանդարին և այլն, գյուղատնտեսութիւն հին ձյուղերի՝ ալցեգործութիւն, խաղողագործութիւն և ծխախոտագործութիւն՝ հետագա աճման հետ միասին: Անդրկովկասը խոշորագույն նշանակութիւն ունի վորպես Միութիւն բամբակային յերկրորդ բազա:

Անդրկովկասի գյուղատնտեսութիւն խոշորագույն պրորբեմներինց մեկը, վորը մենք հիմնականում յուծում ենք յերկրորդ հնգամյակում, ջրային տնտեսութիւն պրորբեմն է:

Ավարտելով առաջին հնգամյակում սկսված իրիզացիոն շիրարարութիւնը, վերակառուցելով գոյութիւն ունեցող իրրիզացիոն սիտեմը, բարելավելով ջրագոտագործումը և կատա-

րելով չորացման խոշոր աշխատանքներ, մենք կտանանք նոր տարածութիւններ, վորոնք հնարավորութիւն կտան զգալիորեն ընդարձակելու արժեքավոր, հատուկ, մերձարևադարձային մշակույթների ցանքերը: Յեղիպտական բամբակի ցանքերն ավելանում են 8 անգամ, և բարձրանում է հանրագետութիւն ընդհանուր տեսակարար կշիռը բամբակի արտադրանքում: Թեյի անկարանների տարածութիւնն ավելանում է մինչև 55 հազար հեկտարի, ռամի տարածութիւնն ավելանում է 6,5 անգամ, ցիտրուսայիններինը՝ 2,4-ինց մինչև 10 հազար հեկտար և այլն:

Յես հատկապես կցանկանայի ընդգծել կոլլեկտիւ յարթավայրի չորացման նշանակութիւնը:

Անդրկովկասի նեղ տեղն է հանդիսանում հաղորդակցութիւն ճանապարհները: Պլանը մի շարք խոշորագույն ձեռնարկումներ է նախատեսում տրանսպորտային տնտեսութիւն ուժեղացման ուղղութիւնով: Ավարտվում է մի շարք յերկաթուղային գծերի կառուցումը (Ղաթարի ձյուղը, Այլաթ - Ջուլֆա, Ոչեմչերի - Աղյեր, Բազմի չուրջ-բաղաքայինը, Յեյլախ - Ստեփանակերտ) մի շարք տեղամասերում կառուցվում են յերկրորդ գծեր, կառուցվում է կովկասյան լեռնաշղթայի վրայով անցնող ճանապարհը, յայն մասշտաբներով անց է կացվում յերկաթուղիների ելեքտրիֆիկացում, կառուցվում են մի շարք խոշոր ավտո-սայլային ճանապարհներ:

Սխալ չի լինի ասել, վոր այդ տրանսպորտային պրորբեմի, մասնավորապես նավթի փոխադրման պրորբեմի յուծումը, եներգետիկայի և ջրային տնտեսութիւն պրորբեմի յուծման հետ միասին, այդ ամենահարուստ շրջանի հետագա զարգացման հիմքերի հիմքը կհանդիսանա: Մրա վրա պետք է ուղղված լինեն ուշադրութիւնն ու ջանքերը՝ յերկրորդ հնգամյա պլանի կատարման համար մղվող պայքարում:

(Ընկ. ԿՈՒՅԲԻՇԵՎԻ գեկուցումից Համկումկուսի (ք) 17-րդ համագումարում):

## ՆԱԼՈՒՏԱՆՔԻ ՆՅՈՒԹ № 6

Ընկ. Ստալինի այս ցուցմունքների հիման վրա անհրաժեշտ է.

1) Ե՛լ ավելի յով կաղմակերպել ամենուրյա տնտեսական ղեկավարութիւն ոպերատիվութիւնն ու կոնկրետութիւնը, վորը չի հաշտվում տնտեսական ապարատի բյուրոկրատական խեղաթյուրումների հետ:

2) Խոլոր յովագույն ինժիներա - տեխնիկական ուժերը կենտրոնացնել վճռական արտադրական տեղամասերում, այլ վոր թե գրասենյակային հիմնարկութիւններում:

151  
3) Ճիշտ կազմակերպել բանվորների աշխատավարձը, ապա հովելով աշխատանքի արտադրողականության աճման նյութական խրախուսումը:

4) Բարձրացնել սոցմրցության և հարվածաչնության գործը՝ նոր տեխնիկայի և նոր արտադրութայինների լավագույն յուրացման համար:

5) Ամուր արտադրական գիտելիքինա հաստատել արդյունաբերական ձեռնարկութայիններում և շինարարության մեջ. խրատացնել բանվորական ժամանակը:

6) Բարձրացնել հեղափոխական զգոնությունը պրոլետարիատի դիկտատուրայի թշնամիների հանդեպ և հասնել իսկական պատասխանատվության՝ բանվոր դատակարգի ու նրա կուսակցության առաջ՝ հանձնարարված գործի համար:

1934 թ. մենք պետք է՝

1. Յերկրին տանք 22 միլիոն տոնն նավթ:

2. Յերկրին տանք 850 հազար տոնն մարդանեց:

3. Յուրացնենք 600 միլիոն ուրբուց ավելի կապիտալներ գրումներ՝ Անդրկովկասի արդյունաբերության և եներգետիկայի մեջ:

4. Բարձրացնել արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը 15 տոկոսով և իջեցնել ինքնարժեքը 4-5 տոկոսով:

5. 1934 թվին արդյունաբերության արտադրանք մշակել 1.800 միլիոն ուրբու, կամ 24 տոկոսով ավելի, քան 1933 թ.:

Աշխատանքների այս ծրագիրը 1934 թվին Անդրկովկասի բոլշևիկները, անկասկած, կկատարեն:

(Ընկ. Բերիայի գեկուցումից՝ Անդրկովկասի կուսկազմակերպությունների 7-րդ համագումարում):

Հայերենը խմբ. Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Տեխ. խմբ. Կ. ԹԱՌԼԱՆՅԱՆ

МЕТОДБЮРО ЦК И БК АКП (5)

ЗАДАНИЕ № 7

ДЛЯ ВСЕЙ СЕТИ ПАРТИЙНОГО ПРОСВЕЩЕНИЯ

Тема: Капитальное строительство К

промышленности во восточной пяти

ПРИЗДАТ - БАКУ 1934 г

338.4  
4-70

Тип. «III Интернационал» Вакполиграф ВМ. Баку. ул. Са...  
Главлит № 4... Ст. А-В. Зак № 2591. Тир. 3000.

2013

« Ազգային գրադարան



NL0045803

